ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 10 » օգոստոս 2022թ. No 3654 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 0064, ԵՐԵՎԱՆ, ՐԱՖՖՈՒ Փ. 111- ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ԿՎԱԼԻԹԻ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՍՊԸ, 1-Ա ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ՌԱՋԱ ԿԱ ԲԱԳ, ՏԵՀՍԻԼ ՆՈՒՐՊՈՒՐ, ՇՐՋԱՆ ԿԱՆԳՐԱ, ՀԻՄԱՉԱԼ ՊՐԱԴԵՇ, ՀՆԴԿԱՍՏԱՆ- ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ,ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ, ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 0064, ԵՐԵՎԱՆ, ՐԱՖՖՈՒ Փ. 111 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԷՆԵՋԻՔՍ ՙԷՊԻՌՈՒԲԻՑԻՆ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ ԴԵՂԱՓՈՇԻ ՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՄ ԿԱԹԻԼԱՆԵՐԱՐԿՄԱՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ 10ՄԳ; ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿ 5ՄԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 28.07.2022 թվականի N 0103092822 բացասական եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111- բաց թողնման հսկող, Կվալիթի Ֆարմասյուտիկալս ՍՊԸ, 1-Ա Ինդաստրիալ Արեա, Ռաջա Կա Բագ, Տեհսիլ Նուրպուր, շրջան Կանգրա, Հիմաչալ Պրադեշ, Հնդկաստան- բալք արտադրող,փաթեթավորող, որակի հսկող արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան,

Րաֆֆու փ. 111 Հայաստանի Հանրապետություն «Էնեջիքս ՛էպիռուբիցին հիդրոքլորիդ դեղափոշի ներարկման կամ կաթիլաներարկման լուծույթի 10մգ; ապակե սրվակ 5մլ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20811 առ 28.07.2022թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ լիարժեք փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ նյութերը չեն ներկայացվել, մասնավորապես 16.07.2021թ.-ին պահանջվել է ներկայացնել դեղի բաղադրությանը համապատասխանող անալիտիկ մեթոդներ՝ որը չի ներկայացվել:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հայաստանի Հանրապետության ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111- բաց թողնման հսկող, Կվալիթի Ֆարմայուտիկալս ՍՊԸ, 1-Ա Ինդաստրիալ Արեա, Ռաջա Կա Բագ, Տեհսիլ Նուրպուր, շրջան Կանգրա, Հիմաչալ Պրադեշ, Հնդկաստան- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111 Հայաստանի Հանրապետություն «Էնեջիքս ՛էպիռուբիցին հիդրոքլորիդ դեղափոշի ներարկման կամ կաթիլաներարկման լուծույթի 10մգ; ապակե սրվակ 5մլ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ

Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157